
ՄԲՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Սույն ձեռնարկը նախատեսված է բանկերում վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այն կրում է ոչ թե նորմատիվային, այլ խորհրդատվական բնույթ: Այս ձեռնարկը կօգնի բանկերին ձևավորել արդյունավետ մեխանիզմներ և համակարգ վարկավորման գործընթացն առավել օպերատիվ և կանոնակարգված իրականացնելու համար:

1. Ներածություն

Ամբողջ աշխարհում սքորինգային համակարգը լայն տարածում է գտել վարկատուների շրջանում, քանի որ հնարավորություն է տալիս նոր վարկեր տրամադրելիս որոշումներ կայացնել՝ հիմնվելով նախկինում տրամադրված համանման հատկանիշներ ունեցող վարկերի ցուցաբերած վարքագծի վրա: Յուրաքանչյուր վարկատուի համար մեծ նշանակություն ունի կանխատեսել, թե արդյոք վարկառուն ի վիճակի կլինի վարկի տրամադրման ողջ ժամանակահատվածի ընթացքում իրականացնել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, թե ոչ: Չնայած սքորինգային համակարգը չի կարող փոխարինել վարկային մասնագետի՝ յուրաքանչյուր վարկի բնութագրիչներից ելնելով անհատական վերլուծություն կատարելու ունակությանը, սակայն այն շատ կարևոր գործիք է վարկային ռիսկի գնահատման համար: Լինելով արագագործ և քիչ ծախսատար համակարգ, սքորինգը բացահայտում է, թե վարկի ու վարկառուի բնութագրիչներն ինչպես կազդեն վարկառուի կողմից վարկի գծով հետագա պարտավորությունների կատարման և սպասարկման գործընթացի վրա: Այսպիսով՝ սքորինգային համակարգը հանդիսանում է մանր վարկերի գծով վարկավորման որոշումներ կայացնելու համար կարևոր գործիք: Լինելով վարկային ռիսկի քանակական գնահատական՝ սքորինգային համակարգը լրացնում և ոչ թե փոխարինում է վարկային մասնագետների կողմից տրված որակական գնահատականին:

Սքորինգային համակարգն օգտագործում է նախկինում տրամադրված վարկերի քանակական բնութագրիչները, որպեսզի կանխատեսի համանման բնութագրիչներ ունեցող վարկերի գծով պարտավորությունների կատարման ընթացքն ապագայում: Այսինքն՝ սքորինգային համակարգը ենթադրում է, որ ապագայում տրամադրվելիք վարկերը կցուցաբերեն նույնպիսի վարքագիծ, ինչպիսին դրսևորել են նախկինում տրամադրված համանման հատկանիշներ ունեցող վարկերը: Եթե ապագան անցյալից շատ է տարբերվում՝ կապված գործարար միջավայրի փոփոխությունների, մրցակցության աճի, նոր գործիքների ներդրման հետ, ապա սքորինգային համակարգի արդյունավետությունը բարձր չի լինի: Ուստի, սքորինգային համակարգի արդյունքների հիման վրա գնահատված վարկային ռիսկը պարբերաբար պետք է համեմատվի վարկային մասնագետի կողմից տրված գնահատականի հետ, որը հիմնված է կոնկրետ վարկի և վարկառուի բոլոր բնութագրիչների վրա: Հետևաբար, որոշ դեպքերում բանկերը կարող են տրամադրել վարկեր կամ մերժել դրանց տրամադրումը՝ անկախ սքորինգի արդյունքներից՝ ենթադրելով, որ վարկային մասնագետը գիտի այնպիսի մանրամասներ, որոնք սքորինգային մոդելը հաշվի չի առել: Նման բացառությունների ուսումնասիրումը նույնպես կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանց քանակական աճը հուշում է, որ սքորինգային մոդելը կորցրել է իր արդիականությունը և չի արտացոլում տնտեսական միջավայրի փոփոխությունները, այսինքն՝ այն վերանայման կարիք ունի:

Սքորինգային համակարգի ձևավորման համար առանցքային նշանակություն ունի համապատասխան տվյալների բազայի առկայությունը: Նախկինում տրամադրված վարկերի գծով բավարար տվյալների բացակայության դեպքում սքորինգային համակարգի ձևավորումն անիմաստ է: Փոքր վարկային պորտֆել ունեցող բանկերին նույնպես խորհուրդ չի տրվում ծախսեր կատարել սքորինգային համակարգի ձևավորման համար: Տվյալների բազան պետք է լինի էլեկտրոնային և պետք է ներառի տեղեկություններ ինչպես հաստատված, այնպես էլ մերժված վարկային հայտերի

վերաբերյալ: Տվյալների բազան պետք է ներառի մանրամասն տեղեկատվություն ինչպես վարկառուի, այնպես էլ վարկի վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր վարկի գծով մարումների ուշացումների և դրանց տևողության վերաբերյալ՝ առկայության դեպքում: Նման տվյալների հավաքագրումը բարդություն չի ներկայացնում, այն կապված չէ լրացուցիչ ծախսերի հետ, քանի որ բանկերի մեծ մասը արդեն իսկ պահանջում են այդ տեղեկությունները վարկ տրամադրելիս: Բացի այդ, բանկերը տվյալների բազայի ձևավորման համար կարող են օգտագործել վարկային ռեգիստրում/վարկային բյուրոներում ձևավորված տվյալ վարկառուի վարկային պատմությունը: Ուստի, սքորինգային համակարգի առավելություններից մեկն էլ նրա ներդրման և կիրառման պարզությունն է, այսինքն՝ սքորինգային համակարգը հեշտությամբ կարող է ինտեգրվել բանկում գործող տեղեկատվական համակարգին՝ պահանջելով շատ քիչ լրացուցիչ տվյալների մուտքագրում՝ ի լրումն բանկում վարկավորման գործընթացում հավաքագրվող տեղեկատվությանը: Այսպիսով՝ մեծածավալ, ճշգրիտ և ամբողջական տվյալների բազան հանդիսանում է սքորինգային համակարգի արդյունավետության կարևորագույն բաղադրիչը:

Տվյալների բազայում արտացոլված առանձին տվյալները հնարավորություն են տալիս կանխատեսել վարկառուի կողմից վարկի գծով վճարումների իրականացման ընթացքը: Տվյալների յուրաքանչյուր տեսակի, ելնելով վերջինիս հարաբերական կարևորությունից և վարկառուի վարկունակության վրա ազդեցությունից, վերագրվում է որոշակի թվային արժեք: Տվյալների բազայում արտացոլված տվյալներին տրված թվային գնահատականների հանրագումարն էլ ձևավորում է ակտիվի վերջնական սքորը: Նշված սքորն օգտագործվում է վարկային հայտերի հաստատման կամ մերժման համար՝ նվազեցնելով վարկային մասնագետի կողմից վարկային հայտի վերլուծության վրա ծախսվող ժամանակը: Բանկի կողմից հաստատվում է նվազագույն սքորի մակարդակ, որը կոչվում է սահմանային սքոր: Վերջինս ուղեկիչ է հանդիսանում բանկերի համար վարկային հայտերը մերժելու կամ հաստատելու համար: Այնուամենայնիվ, վարկային հայտերի վերջնական հաստատման կամ մերժման համար վարկային մասնագետի կողմից պետք է հաշվի առնվեն նաև այն գործոնները, որոնք չեն արտացոլվել սքորինգային համակարգում, սակայն կարող են էապես ազդել վարկառուի վարկունակության վրա:

Բանկի տնօրենների խորհրդի¹ և գործադիր մարմնի² անդամները պետք է հասկանան և գնահատեն սքորինգային համակարգի ներդրման և կիրառման թույլ և ուժեղ կողմերը, և եթե որոշում է ընդունվում համակարգի ներդրման վերաբերյալ, ապա պետք է

¹ Սույն ձեռնարկում օգտագործված «տնօրենների խորհուրդ» տերմինը համապատասխանում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված «բանկի խորհուրդ» տերմինին:

² Սույն ձեռնարկում օգտագործված «գործադիր մարմին» տերմինը համապատասխանում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված «բանկի գործադիր տնօրեն, բանկի տնօրինություն» տերմինին:

համապատասխան քայլեր ձեռնարկվեն համակարգի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Մինչև կիրառումը սքորինգային մոդելը պետք է փորձարկվի և, պետք է գնահատվի ստացված արդյունքների իրատեսությունը: Սքորինգային համակարգը կգնահատվի արդյունավետ, եթե այն հիմնված լինի պատմական շարքերի վրա, գնահատի վարկի կորստի ռիսկը, և ստացված արդյունքների կիրառելիությունն ապահովվի համեմատաբար երկար ժամանակահատվածների և վարկառուների լայն խմբերի համար:

2. Հիմնական հասկացություններ

սքորինգային համակարգ – ռիսկերի կառավարման համակարգի ներքո հաճախորդների վարկունակությունը գնահատող վիճակագրական մոդել, որը գնահատում է հաճախորդի՝ պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ չկատարելու հավանականությունը,

սքորինգային հարցաշար – վիճակագրական վերլուծության, կամ փորձագիտական կարծիքի հիման վրա ստեղծված հարցաշար, որի նպատակն է առավելագույն չափով տարանջատել պարտաճանաչ և անպարտաճանաչ հաճախորդներին,

սահմանային սքոր (cut-off) – սքորի մակարդակ, որից ցածր գնահատական ստացած հաճախորդներին մերժվում է վարկի տրամադրումը,

բարձր կարգի բացառություն (high-side override) – վարկային հայտի մերժում, երբ հաճախորդը ստանում է սահմանայինից բարձր սքոր, սակայն այլ պատճառներով մերժվում է,

ցածր կարգի բացառություն (low-side override) – վարկային հայտի հաստատում, երբ հաճախորդը ստանում է սահմանայինից ցածր սքոր, սակայն այլ պատճառներով հայտը հաստատվում է:

3. Հիմնական դրույթներ

Սույն ձեռնարկով սահմանվում է բանկերում սքորինգային մոդելի մշակմանը և ձևավորմանը օժանդակող աշխատանքների իրականացման գործընթացը:

Սույն ձեռնարկով սահմանված դրույթների իրականացման համար պատասխանատու են բանկի Ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը (այսուհետ՝ Ռիսկերի կառավարման մարմին) և Մեթոդաբանության ստորաբաժանումը:

Ցանկացած բանկային գործիքի ծրագրով իրականացվող վարկավորման գործընթացում կիրառվող սքորինգային/վիճակագրական մոդել պետք է ենթարկվի որակի գնահատման՝ նախքան կիրառումը և կիրառումից հետո: Բանկում իրականացվող ներքին վերահսկողական այլ գործընթացներից բացի Ռիսկերի կառավարման մարմինը և Մեթոդաբանության ստորաբաժանումը պետք է հետևեն սքորինգային համակարգի գնահատման, ներդրման և վավերականացման գործընթացներին:

Սքորինգային համակարգի վերլուծության արդյունքները և դրանց հիման վրա կատարվող փոփոխությունները պետք է ներկայացվեն և հաստատվեն բանկի տնօրենների խորհրդի կողմից կամ վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում գործադիր մարմնի կողմից:

Սույն ձեռնարկով պետք է առաջնորդվել վարկավորման, հատկապես սպառողական վարկավորման գործընթացների իրականացման ժամանակ:

Սքորինգային համակարգի վավերականացման փուլում հաճախորդների սքորինգը իրականացնում է Ռիսկերի կառավարման մարմինը՝ հետազոտելով հաճախորդների վարկային փաթեթները և մուտքագրելով հարցաշարում ներկայացված հարցերի պատասխանները: Բոլոր հաճախորդների սքորինգային տվյալները պետք է պահպանվեն հաճախորդների բազայում, որի համար պատասխանատու է Ռիսկերի կառավարման մարմինը: Մոդելի վավերականացումից հետո և համակարգի զարգացման հետ մեկտեղ հետագայում սքորինգը կարող է իրականացվել վարկային մասնագետների կողմից:

Սույն գործընթացի բոլոր մասնակիցները պարտավոր են ապահովել սքորինգային համակարգի գաղտնիությունը:

Բանկը սքորինգային համակարգ ձևավորելու համար կարող է առաջնորդվել քայլերի հետևյալ հաջորդականությամբ.

Քայլ 1: Մշակվում է տվյալ բանկային գործիքի (վարկի տեսակ) համար կոնկրետ հարցաշար: Հարցաշարը պետք է բաղկացած լինի տվյալ վարկի տեսակը կամ վարկառուին բնութագրող հարցադրումներից: Օրինակ՝ վարկառուի տարիքը, ամսական եկամտի չափը, եկամտի կայունությունը, ընտանիքում կայուն եկամուտ ստացող անձանց թիվը, վարկի սպասարկման ամսական գումար/վարկառուի ամսական եկամուտ, գրավ/վարկի գումար (գրավի առկայության դեպքում) և այլ տվյալ վարկի տեսակին կամ վարկառուների խմբին բնորոշ հարցադրումներ:

Քայլ 2: Ելնելով տվյալ բանկային գործիքի համար կազմված հարցաշարի յուրաքանչյուր հարցադրման կարևորությունից (վարկի վերադարձման տեսանկյունից ունեցած նշանակությունից) յուրաքանչյուր հարցադրմանը վերագրվում է որոշակի գործակից՝ տեսակարար կշիռ: Յուրաքանչյուր հարցադրմանը վերագրվող գործակիցի արժեքը որոշվում է՝ հիմք ընդունելով նախորդ ժամանակաշրջաններում տվյալ վարկի տեսակի չվերադարձի

դեպքերի հիմնական պատճառները: Որպես կանոն, վարկը չվերադարձնելու հիմնական պատճառները բնութագրող հարցադրումները ստանում են ավելի բարձր կշիռ: Յուրաքանչյուր հարցադրման կշիռը որոշելիս հաշվի է առնվում նաև տվյալ հարցադրման արդիականությունը, թե արդյոք ժամանակի ընթացքում այն չի կորցրել իր կարևորությունը՝ որպես տվյալ վարկը չվերադարձնելու պատճառ:

Քայլ 3. Յուրաքանչյուր հարցադրման հնարավոր տարբերակների համար մշակվում են գնահատականների միջակայքեր: Այսինքն՝ ելնելով տվյալ հարցադրմանը տրված պատասխանի բարենպաստությունից վարկի վերադարձն ապահովելու տեսանկյունից՝ տվյալ պատասխանը կհայտնվի ավելի բարձր կամ ցածր միջակայքում: Օրինակ՝ «Վարկառուի տարիքը» հարցադրմանը տրված հնարավոր պատասխանները կարող են տարանջատվել ըստ հետևյալ միջակայքերի.

մինչև 20 տարեկան	100-130
20-30 տարեկան	130-160
30-50 տարեկան	160-200
կենսաթոշակային տարիք	100-130

Քայլ 4. Յուրաքանչյուր հարցադրմանը տրված պատասխանի տարբերակը ստանում է իր միջակայքին համապատասխան գնահատականը, որն այնուհետև բազմապատկվում է տվյալ հարցադրմանը վերագրված գործակցով: Արդյունքում ստացվում է տվյալ հարցադրման անհատական սքորը:

Քայլ 5. Որոշվում է տվյալ բանկային գործիքի համար մշակված հարցաշարի բոլոր հարցադրումների անհատական սքորերի հանրագումարը, որն էլ հանդիսանում է կոնկրետ վարկի վերջնական սքորը:

4. Մքորինգային հարցաշարերի մոնիտորինգը

Նախնական աշխատանքներ

Մքորինգի համակարգի սահմաններում նախքան նոր մոդելի ներդրումը և կիրառումը բանկի հաճախորդների վարկունակության գնահատման այլ գործիքների հետ համատեղ՝ պետք է կազմված լինեն հետևյալ հաշվետվությունները (Հավելված 1).

- Իրադարձությունների մատյան,
 - Վարկերի ուսումնասիրություն,
 - Կայունության վերլուծություն,
 - Որոշումների ընդունման վերլուծություն,
 - Արդյունավետության վերլուծություն:
-
- Իրադարձությունների մատյան (օրական կտրվածքով)

Իրադարձությունների մատյանը հաշվետվություն է, որտեղ պետք է գրանցված լինեն վարկավորման գործընթացին վերաբերող բոլոր նշանակալի իրադարձությունները: Իրադարձությունների գրանցումը մատյանում անընդհատ գործընթաց է: Երբ արտաքին, կամ ներքին միջավայրում տեղի է ունենում իրադարձություն, որը ազդեցություն է ունեցել, կամ կարող է ազդեցություն ունենալ վարկավորման գործընթացի վրա, այն պետք է գրանցվի: Պետք է տարանջատել.

- Վարկավորման իրադարձությունների մատյան, որտեղ լրացվում են այն իրադարձությունները, որոնք կարող են ազդել ամբողջ վարկավորման գործընթացի վրա և չեն վերաբերում որևէ առանձին վերցրած գործիքի,
- Պորտֆելի իրադարձությունների մատյան, որտեղ լրացվում են կամայական ներքին, կամ արտաքին փոփոխությունները, որոնք ազդել են, կամ կարող են ազդել որոշակի առանձին վերցրած պորտֆելի վրա:

Հետևյալ իրադարձությունները ենթակա են պարտադիր լրացման (նվազագույն պահանջներ)

- Մենեջմենթի փոփոխություններ,
 - Սահմանային սքորի փոփոխություն,
 - Հավաքագրումների քաղաքականության մեջ փոփոխություններ,
 - Բացառությունների (override) քաղաքականության մեջ փոփոխություններ,
 - Հաճախորդների նկատմամբ պահանջների փոփոխություն,
 - Մարքեթինգային ծրագրերում փոփոխություններ,
 - Հայտադիմումի փոփոխություն,
 - Տվյալների փոխանցման ընթացակարգի մեջ փոփոխություններ,
 - Մակրոտնտեսական փոփոխություններ:
-
- Վարկերի ուսումնասիրություն (ամսական կտրվածքով)

Վարկերի ամսական վերլուծությունը Կայունության և Որոշումների ընդունման համապարփակ վերլուծությունների հիման վրա ստացված տվյալների համախմբումն է:

Վարկերի ամսական վերլուծությունը պահանջում է հետևյալ տեղեկատվությունը.

- Վարկերի/ Վարկային գծերի քանակ, որոնք հաստատվել և տրամադրվել են՝ ունենալով սահմանայինից ցածր սքոր (ցածր կարգի բացառություն),
- Վարկերի/ Վարկային գծերի քանակ, որոնք մերժվել են՝ ունենալով սահմանայինից բարձր սքոր (բարձր կարգի բացառություն) ,
- Սքորինգի կրիտիկական սխալների չափ՝ սխալ տեղեկատվության մուտքագրման կամ մուտքագրման ընթացքում վրիպումների պատճառով սխալ սքորինգ անցած հաճախորդների քանակ, որոնց հայտերը հաստատվել են, սակայն չպետք է հաստատվեին, եթե սքորինգը ճիշտ անցկացվեր (տոկոսով բոլոր հաստատված վարկերի մեջ),
- Սքորինգի ոչ կրիտիկական սխալների չափ՝ սխալ տեղեկատվության մուտքագրման կամ մուտքագրման ընթացքում վրիպումների պատճառով սխալ սքորինգ անցած հաճախորդների քանակ, որոնց հայտերը չեն հաստատվել, սակայն կհաստատվեին, եթե սքորինգը ճիշտ անցկացվեր (տոկոսով բոլոր հաստատված վարկերի մեջ),
- Հաստատված հայտերի միջին սքոր:

- Կայունության վերլուծություն (ամսական)

Կայունության ամսական վերլուծությունը բաղկացած է.

- Ընտրանքի կայունության հաշվետվությունից և
- Փոփոխականների կայունության հաշվետվությունից:

Ընտրանքի կայունության հաշվետվության միջոցով պարզվում է, թե արդյոք նախկինում ուսումնասիրված ընտրանքի հիմնական վիճակագրական բնութագրիչները փոփոխվել են, թե ոչ: Փոփոխականների կայունության հաշվետվությունը ցույց է տալիս փոփոխականների նշանակալիության փոփոխությունները ժամանակի ընթացքում:

Կայունության ամսական վերլուծության նպատակն է.

- համոզվել, որ տվյալ ժամանակաշրջանում դիմող հաճախորդների դեմոգրաֆիական պատկերը մոտ է նախկինում ընդունված ստանդարտ ընտրանքին,
- համոզվել, որ ընթացակարգը պահպանված է և ճիշտ է իրականացվում, անձնակազմի կողմից ճիշտ են ընկալվում և կիրառվում կողավորման ցուցումները և փոփոխականների բացատրությունները, չկան ծրագրավորման սխալներ,
- հաստատել սքորինգի նորմատիվներ, որոնք հաշվի են առնում ընտրանքի սքորի մեջ թեթև շեղումները:

Կայունության վերլուծության նպատակով պետք է իրականացվի.

- Ընտրանքի կայունության վերլուծություն՝ համեմատելով ստանդարտ ընտրանքի և ընթացիկ վարկային հայտերի սքորերի բաշխումը,

- Փոփոխականների կայունության վերլուծություն՝ համեմատելով սքորինգի բոլոր փոփոխականների բաշխումները ստանդարտ և ընթացիկ ընտրանքների համար:

Համեմատություն անցկացնելու համար կարող են կիրառվել մի քանի բանաձևեր.

- Կոլմոգորով-Սմիրնովի տեստ,
- Կայունության գործակից:

Եթե բանկը նոր գործիք է ներդնում և չունի այդ գործիքի գծով տվյալներ, ապա սքորինգային հարցաշարը կազմելու և մոդելը հաստատելու համար պետք է կուտակվեն առնվազն 3 ամսվա տվյալներ՝ որոնք էլ կկազմեն ստանդարտ ընտրանքը:

- Որոշումների ընդունման վերլուծություն (ամսական)

Հետևյալ վերլուծությունները պետք է կատարվեն ամեն ամիս՝ վարկային սքորինգի գործընթացի ամբողջականությունը վերահսկելու համար.

- Որոշումների ընդունման հաշվետվություն.
 - o Դիմումների քանակ և պահանջվող գումարներ,
 - o Սքոր անցած դիմումների քանակ,
 - o Հաստատված դիմումների քանակ,
 - o Հետ վերցրած/հրաժարված դիմումների քանակ,
 - o Մերժված դիմումների քանակ,
 - o Դիմումները մերժելու պատճառները,
 - o Դիմումից հրաժարվելու պատճառները,
 - o Միսալ սքորինգի քանակը և կշիռը բոլոր սքորերի մեջ:

- Բացառությունների հաշվետվություն – ընդհանուր.

- o Ըստ սքորի մակարդակների (band),
 - հաստատումների կշիռը,
 - տրամադրված վարկերի կշիռը,
- o Բարձր կարգի բացառությունների կշիռը,
- o Ցածր կարգի բացառությունների կշիռը,

- Բացառությունների վերլուծություն – Որոշումների ընդունման վերլուծություն.

- o Ըստ առանձին պատճառի սահմանայինից բարձր սքորով մերժված վարկերի քանակ,
- o Ըստ առանձին պատճառի սահմանայինից ցածր սքորով հաստատված վարկերի քանակ,
- o Բարձր և ցածր կարգի բացառությունների քանակը՝ դասակարգված ըստ բացառություն համարվելու պատճառների:

- Արդյունքների գնահատում (Եռամսյակային)

Արդյունքների վերլուծությունը պետք է պարբերաբար կատարվի՝ ստուգելու համար, թե արդյոք սքորինգային համակարգը արդյունավետ է տարբերակում լավ և վատ հաճախողներին:

Հաստատված վարկերի վարքագիծը անհրաժեշտ է հսկել բոլոր հնարավոր մեթոդներով: Դրանց շարքին են պատկանում.

- o Ժամկետանց վարկերի և անհուսալի դասակարգված վարկերի կշիռը,
- o կորուստների կշիռը բոլոր հաստատված վարկերում ըստ սքորի մակարդակների:

Վերլուծությունը պետք է անց կացվի առնվազն հետևյալ սեգմենտներով.

- իրացման ուղիներ,
- ռեգիոն,
- մասնաճյուղ,
- դիլեր:

- Արդյունքների վերլուծության հաշվետվությունները

Հետևյալ արդյունավետության գնահատման հաշվետվությունները պետք է կազմվեն հարցաշարի կիրառումը սկսելուց հետո, երբ կուտակված կլինի բավականաչափ տեղեկատվություն, քայց ոչ ուշ, քան 6 ամիս հետո.

- o Հարցաշարի արդյունավետության հավաստիացման/հիմնավորման հաշվետվություն. այս հաշվետվության նպատակն է ստուգել ժամանակի ընթացքում մոդելի՝ ռիսկ-դասակարգող հատկությունները, ըստ տարբեր չափանիշների:
- o Կանխատեսված և փաստացի վատ վարկերի կշռի համեմատություն՝ ըստ սքորի մակարդակների. այս համեմատության նպատակը համոզվելն է, որ փաստացի վատ վարկերի կշիռը մոտ է կանխատեսված վատ վարկերի կշռին:
- o Հարցաշարի արդյունավետության գնահատման հաշվետվություն. քանի որ փոփոխականների նշանակությունը և իմաստը կարող է փոխվել ժամանակի ընթացքում, անհրաժեշտ է համեմատել ըստ սքորերի մակարդակների կանխատեսված և փաստացի վատ վարկերի կշիռները: Փոփոխականների և դրանց կշիռների կանխատեսված և փաստացի արժեքների ամբողջական համեմատությունը կարող է վկայել փոփոխականների կշիռների և դրանց արժեքների փոփոխության մասին:
- o Շեղումների հաշվետվություն. սա մանրամասն և յուրահատուկ հաշվետվություն է, որը ցույց է տալիս ամեն փոփոխականի վատ վարկերի հարաբերակցությունը ըստ ամեն սքորի մակարդակի: Այն կիրառվում է որոշելու համար, թե արդյոք որոշ փոփոխականներում հարցաշարը ունի շեղումներ: Շեղումների հաշվետվությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ նույն սքորը հավաքած հայտերը ունեն վատ վարկ դառնալու նույն հավանականությունը՝ անկախ առանձին հարցերին տրված պատասխաններից: Երբ սա տեղի չի ունենում, ասում են, որ հարցաշարը շեղված է, և անհրաժեշտություն է առաջանում վերանայել շեղված հարցերի կշիռները: Բացի այդ, շեղումների հաշվետվությունը կարող է կիրառվել որոշելու համար այն գործիքները, որոնց համար կարիք կա մշակել առանձին հարցաշար:

5. Հաճախորդների սքրինինգին վերաբերող դրույթներ

Քանի որ վարկի տրամադրման մասին որոշում ընդունելիս բացի սքրինինգից հաշվի են առնվում այլ գործոններ ևս, այս գործոնների ճիշտ կիրառումը պետք է ամրագրված լինի սքրինինգի կիրառումը կարգավորող մյուս փաստաթղթերում: Պարտադիր պետք է տրվեն լուծումներ հետևյալ երկու խնդիրներին.

- Բարձր կարգի բացառությունները հայտեր են, որոնք ստացել են սահմանայինից բարձր սքոր, սակայն մերժվել են՝ ելնելով փորձագիտական դատողություններից: Նմանատիպ հայտերի պատահական ընտրանքը պետք է հաստատվի և հսկվի մնացած վարկերից առանձին: Այս վարկերի վարքագծից կարելի է դատել, թե արդյոք կա կարիք վերանայել բարձր կարգի բացառությունների չափանիշները:
- Ցածր կարգի բացառությունները հայտեր են, որոնք ստացել են սահմանայինից ցածր սքոր, սակայն հաստատվել են՝ ելնելով փորձագիտական դատողություններից: Այս վարկերի վարքագիծը ևս պետք է ուսումնասիրվի մնացած վարկերից առանձին: Եթե սքրինինգի համակարգը ճիշտ է աշխատում, ապա այսպիսի վարկերը կցուցաբերեն ժամկետանցության և դուրսգրումների բարձր կշիռ և կլինեն վնասաբեր:

Վերին և ստորին բացառությունների հսկողությունը ըստ պատճառների կարող է հուշել, թե ինչպես կարելի է բարելավել բացառությունների չափանիշները:

Բացառությունների հետևյալ հարաբերակցությունները պետք է հաշվարկվեն և հսկվեն.

- Բարձր կարգի “պարզ” բացառությունների մակարդակ՝ սահմանային, կամ սահմանայինից բարձր սքոր ստացած և մերժված հայտերի քանակ՝ բաժանած սահմանային, կամ սահմանայինից բարձր սքոր ստացած հայտերի ընդհանուր թվին:
- Բարձր կարգի “իրական” բացառությունների մակարդակ՝ սահմանային, կամ սահմանայինից բարձր սքոր ստացած և մերժված հայտերի թիվ, որոնք բավարարել են բոլոր նվազագույն պահանջներին՝ բաժանած սահմանային, կամ սահմանայինից բարձր սքոր ստացած հայտերի ընդհանուր թվին:
- Ցածր կարգի “պարզ” բացառությունների մակարդակ՝ սահմանայինից ցածր սքոր ստացած և հաստատված հայտերի քանակ՝ բաժանած սահմանայինից ցածր սքոր ստացած հայտերի ընդհանուր թվին:
- Ցածր կարգի “իրական” բացառությունների մակարդակ՝ սահմանայինից ցածր սքոր ստացած և հաստատված հայտերի թիվ, որոնք բավարարել են բոլոր նվազագույն պահանջներին՝ բաժանած սահմանայինից ցածր սքոր ստացած հայտերի ընդհանուր թվին:
- Ցածր կարգի բացառությունների կշիռ հաստատվածների մեջ՝ սահմանայինից ցածր սքոր ստացած և հաստատված հայտերի քանակ հարաբերած բոլոր հաստատված հայտերին:

Բացառությունների առավելագույն սահմանաչափերը պետք է ամրագրված լինեն բանկային գործիքների ծրագրերում:

6. Եզրափակիչ դրույթներ

Փորձարկումից հետո սքորինգային համակարգի ցուցաբերած դրական արդյունքների դեպքում բանկը կկարողոնա օգտվել սքորինգային համակարգի հետևյալ առավելություններից.

- Սքորինգը հնարավորություն կտա ավելի լավ վերլուծել հաճախորդների պատկերը և կանխել հնարավոր վատ վարկառուներին վարկերի տրամադրումը: Սա թույլ կտա նվազեցնել վարկային ռիսկի մակարդակը, ինչպես նաև վարկերի անհուսալի դասակարգելու հետևանքով առաջացած կորուստները:
- Շնորհիվ վարկավորման մասին որոշումների ընդունման ավտոմատացման վարկավորումը կդառնա ավելի օբյեկտիվ:
- Սքորինգի կիրառումը կնվազեցնի վարկային հայտերի ուսումնասիրության վրա ծախսվող ժամանակը 1-3-օրից մինչև 1-2 ժամ, մանավանդ երբ հայտերի քանակն աճի:
- Սահմանային սքորի կիրառումը և հետագա վերլուծությունները հնարավորություն կտան չափել վարկի չվերադառնալու հավանականությունը, ռիսկի սահմանաչափը և ընդունելի կորուստների սահմանաչափը:

Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ հաճախորդների սքորինգը տալիս է միայն պատասխան «Հաստատել/ Չհաստատել» հարցին: Երբ հայտը հաստատելիս անհրաժեշտ է լինում որոշում կայացնել վարկի պայմանների վերաբերյալ, կարող են կիրառվել հետևյալ մեթոդները.

- Պարտքի բեռի վերլուծություն,
- Բարձր սքոր ստացած հաճախորդներին առաջարկել ավելի մեծ ծավալի վարկ, կամ վարկային գիծ, կամ առաջարկել ավելի երկար մարման ժամկետ:

Վարկերի կառուցվածքի ցանկացած վերանայումը սքորինգի քաղաքականությունում փոփոխություններ կատարելու միջոցով պետք է կիրառվի միայն փորձարկումներից և վերլուծություններից հետո:

